գր 1 27.03.2018թ
կոդ 12418095

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«20» մարտի 2018թ. № 183-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N414-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ, ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ԲԱՑՎԱԾ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔԸ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՍՔՈՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔԻ ՁԵՎԸ, ԴԻՄՈՒՄԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԻՄՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-րդ մասի 1-ին կետը և 17-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 24-ի «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման բազայում բացված՝ ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքի ձևը, դիմումի օրինակելի ձևը և անհատական հաշվի քաղվածքը ստանալու նպատակով դիմումը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N414-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչել:

2. Սահմանել՝

1) ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքը դիմումի հիման վրա փաստաթղթային կամ էլեկտրոնային տեսքով տվյալների սուբյեկտին տրամադրելու կարգը՝ համաձայն հավելված N1-ի.

2) ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքը ստանալու դիմումի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված N2-ի.

3) ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքի ձևը՝ համաձայն հավելված N3-ի.

4) ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքը ստանալու նպատակով դիմումը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը՝ համաձայն հավելված N4-ի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ